

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ  
ԿԱՐԴԱՑՈՒԱԾ «ԱՐԱՐԱՏ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ԺԻՐԱՅՐ  
ՆԱՅԻՐԻԻ ԿՈՂՄԷ  
ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ԲԱՑՄԱՆ  
ՕՐԸ  
23 ԱՊՐԻԼ 1994ԻՆ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.Ի

Մեծայարգ Վեհափառ Տէր,  
Յարգելի ներկաներ,

Տարիներէ ի վեր Ռուբէն Սեւակի հարազատներուն երազը իրականացած եղաւ, Ռուբէն Սեւակի անունով մկրտուած այս Մատենադարանին բացումովը, շնորհիւ Սահակեան-Մկրտիչեան գոլէճին վարչութեան, մատակարար մարմնին, բոլոր ուսուցիչներուն եւ մա՛նաւանդ գոլէճին տնօրէն բանաստեղծ Պէպօ Սիմոնեանին:

Ռուբէն Սեւակի հարազատներուն անունով մեր երախտագիտութիւնը եւ շնորհակալութիւնը կը յայտնենք իրենց:

Ռուբէն Սեւակի անուան Մատենադարանին Պէյրութի մէջ բացուիլը մեզի համար շատ մեծ նշանակութիւն ունի:

Մեզ համար Պէյրութը, թուրքերուն կողմէ գրաւուած Արեւմտեան Հայաստանին առժամեայ կեդրոնն է: Եւ Պէյրութի հայ ժողովուրդն ալ այդ գողցուած Արեւմտեան Հայաստանին ժողովուրդն է:

1915-ի նահատակներուն շառաւիղը հրաշալի վերածնունդով Հայաստան մը հիմնեց Լիբանանի մէջ: Եւ մինչեւ այն ատեն որ Հայ ժողովուրդը Լիբանանի մէջ է

Թուրքը երբեք հանգիստ քուն պիտի չունենայ:

2

Դիպուածով չէ որ Ռուբէն Սեւակի անունով Մատենադարանը Պէյրութի մէջ լոյս աշխարհ եկաւ: Թուրքերուն ձեռամբ նահատակուած Ռուբէն Սեւակին կտակած իսկական վերածնունդին հիմերը այս Մատենադարանին բացումովը նետուած պիտի ըլլան:

Ռուբէն Սեւակի անուան այս Մատենադարանը, Սեւակի գաղափարականը եւ անոր հերոսական նահատակութիւնը պիտի լուսաւորէ հայ հոգիները Պէյրութի մէջ եւ Պէյրութէն դէպի ամէն կողմ, ի շահ հայկական բարձր իտէալներուն:

Խորին շնորհակալութիւն ձեր ներկայութեան համար:

Ֆրանսա - COTE D'AZUR-ի

Ռուբէն Սեւակի Անուան Հիմնարկի Հիմնադիր

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

\*\*\*

Յ.Գ. - Ռուբէն Սեւակի անուան Մատենադարանին բացման հանդիսութեան այս բացառիկ օրուան, մենք դժբախտաբար չկրցանք մասնակից ըլլալ մեր անհանգստութեան պատճառաւ, հակառակ որ ամիսներէ ի վեր մեծ հրճուանքով կը սպասէինք բացման օրուան ժամանումին:

Այս պատճառաւ Ռուբէն Սեւակի հարազատները պիտի ներկայացնէ Ռուբէն Սեւակի դուստրը՝ Շամիրամ Սեւակ:

1985-ին Նիսի մէջ Ռուբէն Սեւակի ծննդեան 100ամեակին օրը, Անդրանիկ Ծառուկեան սապէս ըսած էր.- «Ի՞նչ բարեբախտութիւն է Ռուբէն Սեւակի դուստրին

ներկայութիւնը այս հանդիսութեան»:

3

Նկատելով որ Շամիրամ Սեւակը հայերէնով չի կրնար արտայայտուիլ, մենք պիտի խնդրենք մեր սիրելի եղբօր ժիրայր Նայիրիէն եւ Տիկ. Մարի Նայիրիէն որ մեզի ներկայացնեն այս բացառիկ հանդիսութեան:

Խորին շնորհակալութիւններով՝

ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԻՐՄԱ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ